ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018թ. հունվարի 11 N 6 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԿԱՐԲԻԻ Վ. ԹԵՔԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԱԹԵՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 226-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Աբգարյանի 2018 թվականի հունվարի 11-ի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Կարբիի Վ. Թեքեյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ս. Հակոբյանի 2018 թվականի հունվարի 10-ի բացատրությունը՝ ***կարգադրում եմ.***

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Կարբիի Վ. Թեքեյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սաթենիկ Հակոբյանին հայտարարել նկատողություն:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ